ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԱՆ

Սովետական Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները[1] XIX դարի վերջից իրենց պատմաաշխարհագրական պայմանների բերումով և հատկապես XX դ. սկզբից՝ երկաթուղու կառուցումից հետո, առևտրական և մշակութային սերտ կապերի մեջ են գտնվել Անդրկովկասի քաղաքային կենտրոնների հետ։ Դրա շնորհիվ քաղաքային ապրելակերպը ներթափանցելով այս վայրերը Հայաստանի մյուս շրջանների համեմատությամբ, ավելի վաղ ներազդեց նաև ժողովրդական բնակարանների զարգացման վրա, դրանք ենթարկելով էական փոփոխությունների։

Հայաստանի լեռնային և հարթ-սարալանջային անտառազուրկ վայրերում մինչև վերջերս պահպանվել էին գլխատներ, ուր մարդիկ իրենց բնակարանների ջերմությունը քամիներից և ցրտաշունչ կլիմայից պահպանելու համար բընակվում էին անասունների հետ մի ծածկի տակ[2]։ Բարեխառն կլիմա ունեցող շրջաններում, օրինակ՝ Արարատյան դաշտավայրում, փայտով առատ լեռնային Ղարաբաղում, Լոռիում, Սյունիքում գոմի անջատումը բուն տնից շատ ավելի վաղ է կատարվել։ Դրան նպաստեցին XIX դ. վերջերից թիթեղյա վառարանների գործածությունը, փռերի առաջ գալը։ Եվ այժմ, ի տարբերություն մյուս շրջանների, Հայաստանի հյուսիս-արևելքում իսպառ վերացել են հնատիպ՝ գետնափոր, կիսագետնափոր տները, այնինչ մինչև XIX դարի 60—70-ական թվականները այստեղի գյուղերից յուրաքանչյուրը իրենից ներկայացրել է միմյանց կից կիսագետնափոր երդիկավոր գլխատների և հարակից օժանդակ շենքերի մի զանգված[3]։

XIX դ. վերջերից բնակարանների հին տիպերի փոխարեն հանդես եկան քաղաքատիպ կղմինդրածածկ տներ, որոնք հետզհետե, հատկապես սովետական շրջանում, լայն տարածում ստացան։ Հյուսիս-արևելյան շրջանների՝ մեզ հասած ժողովրդական կառույցները հիմնականում քաղաքատիպ վերգետնյա մեկ, մեկուկես, կամ երկհարկանի տներ են՝ իրենց տնտեսական բաղադրամասերով, ինչպես նաև հատուկենտ արտադրական շինություններ։ Կառույցների երկլանջ կամ քառալանջ ծածկերը պատված են կղմինդրներով, թիթեղով, իսկ նորագույնները՝ նաև շիֆերով։ Հողե կտուրներ քիչ են պահպանվել։ Այժմյան գյուղական բնակարանները կառուցված են մեկուսի, դաստակերտային հիմունքներով։ Դեպի փողոցը նայում է տան՝ մեծ մասամբ խուլ, երբեմն էլ, երբ հարկադրում է լանջի դիրքը՝ մի քանի լուսամուտներով ճակատը։ Տունը բացվում է դեպի բակ. այս կողմում է գտնվում նաև սյունավոր երեսբացը, որը կազմակերպում է բնակարանի մուտքը։ Օժանդակ մասերը կառուցվում են բնակարանին առընթեր, նրա՝ դեպի բակ ուղղված կողմում։ Երբեմն այդ նպա-

---

1 *Տվյալ դեպքում նկատի են առնվում Լոռու և Տավուշի պատմաաշխարհագրական շրջանները, ըստ որում Լոռու մեջ մտնում են Ստեփանավանի, Գուգարքի, Թումանյանի, Կալինինոյի, իսկ Տավուշի մեջ՝ Նոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի, Կրասնոսելսկի վարչաքնատարածքային շրջանները։*

2 *Ս. Խ. Մնացականյան, Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, 1956, էջ 89։*

3 *Ե. Լալայան, Բորչալուի գավառ («Ազգագրական հանդես», գ. 9, Թիֆլիս, 1902, էջ 206—208), Դ. Ս. Վարդումյան. Լոռեցիների կենցաղը, Երևան, 1956, էջ 102։*

տակին է ծառայում կիսանկուղային հարկը։ Անհարթ տեղանք ունեցող գյուղերում բնակարանները տեղադրվում են թեք լանջին, մեծ մասամբ բաղկացած կիսանկուղային առաջին և երկրորդ՝ բնակելի հարկերից։ Բնակարանների կողմնորոշումը երբեմն ուղղակի թելադրվում է լանջի դիրքով, այնպես որ բնակարանները կարող են ուղղվել նույնիսկ անբարենպաստ կողմ (հյուսիս, հյուսիս-արևելք)։ Նման պարագայում աշխատում են բացվածքներ անել շենքի կողային պատերում։ Մնացած բոլոր դեպքերում բնակարանը կողմնորոշվում է դեպի հարավ, հարավ-արևելք կամ արևելք։ Հյուսիսային պատը սովորաբար խուլ է լինում։ Բնակարանների այսպիսի դասավորությունը յուրահատուկ տեսք է տալիս փողոցին. հարավից դեպի հյուսիս գնալիս անցորդը տեսնում է գեղեցիկ ձևավորված պատշգամբների ամբողջ շարքեր, որոնք փակվում են, երբ շարժվում ենք հյուսիսից հարավ։

Այժմ դիտարկենք, թե ինչպիսի մշակութային և տնտեսական պայմաններում և ինչ ավանդական ճարտարապետական հիմքի վրա հանդես եկավ այդ քաղաքատիպ կղմինդրածածկ տան նոր տիպը և, վերլուծելով ժողովրդական բնակարանի զարգացման յուրաքանչյուր փուլը, փորձենք դասակարգել նրա տիպերը։ Առաջինը գլխատան տիպն է (կամ հին տիպը)։ Սրա անաղճատ նմուշները եզակի են հյուսիս-արևելյան շրջանների այդ բավական ընդարձակ տարածքում։ Գլխատան համակառույցները եղել են կիսագետնափոր ու անկանոն դասավորված։ Արցախի (Ղարաբաղի) նման այստեղ ևս վաղ է տեղի ունեցել գերդաստանի տրոհումը, և որդիները բնակություն են հաստատել հայրական տնից անջատ կառուցված բնակարաններում[4]։ Ուստի, XIX դ. տոհմական մեծ տները բնորոշ չէին այս վայրերին։ Լոռու և Տավուշի գլխատունը տաքացվել է բուխարիկով, բայց կենտրոնում ունեցել է նաև գետնի մեջ չխորացող մի օջախ։ Գլխատանը կից եղել է երդիկավոր հարթ ծածկով մի սենյակ, որը ծառայել է իբրև մառան, երբեմն էլ՝ ննջարան։

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններին բնորոշ գլխատունը տան առջևում անպայման ուներ սյունավոր երեսբաց։ Այստեղ անտային պատերից՝ քամուց առավել պահպանվածի մեջ կար կից որմնախորշերով մի բուխարիկ, հաճախ նաև թոնիր։ Տարվա 7—8 ամիս տևող տաք ժամանակամիջոցում երեսբացը բնակարանի ամենագործածելի մակերեսն էր։ Այնտեղ էր տեղադրվում գորգագործական հաստոցը։ Փոքր ծավալի մի գլխատուն էլ (թոնրատուն կամ հացատուն) կառուցել են մեկուսի՝ իբրև խոհանոց։ Տան առջևում եղել են հացահատիկի հորեր, իսկ կողքին՝ կալը և նրան կից հարդանոցը, որը սովորաբար գետնափոր է կառուցվել։ Գոմի օդա հաղվադեպ է եղել, իսկ գոմը սովորաբար բնակելի բաժանմունքներից քիչ հեռու է կառուցվել՝ ի տարբերություն անտառազուրկ վայրերի համակառույցների, որտեղ բոլոր բաժանմունքները կցված էին իրար, և պարտադիր էր գոմի օդան։ Ուսումնասիրվող շրջաններում այդպիսիք կառուցվել են նաև վերաբնակիչների կողմից, որոնք Բարձր Հայքից գաղթելով՝ բերել են իրենց կառուցողական ավանդույթները[5]։ Նման մի համակառույց չափագրել ենք Կալինինոյի շրջանի Սարչապետ գյուղում (տեղի բնակիչները եկել են Ալաշկերտից՝ 1818 թ.)[6]։ Ծածկի կոնստրուկցիայի հիմնական, առավել տարածվածը ուղղանկյուն գերանաշարքերով տիպն է։ Ավելի հազվադեպ է հանդիպում հազարաշեն տիպի ծածկը, որը հիմնականում կիրառել են գաղթականները, իսկ տեղում «սողոմաքաղ» անվանվող հազարաշեն ծածկով

---

[4] Ст. Лисициан, Из материалов по изучению жилищ Армении («Известия Кавказского историко-археологического института», т. III, Тифлис, 1915, с. 103).

[5] Ст. Лисициан, Из материалов по изучению жилищ Армении, «Нор—Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов—Памбакского и Даралагязского» («Известия» Кавказского историко-археологического института, т. VI, Тифлис, 1927, с. 140).

[6] Ն. Լալայան, Բորչալուի գավառ («Ազգագրական հանդես», գ. 7—8, Թիֆլիս, 1901, էջ 335)։

գլխատներ չափագրել են Օձուն գյուղում[7]։ Պահպանված քչաքանակ նմուշների մի մասը պատկանում է այն «հիբրիդային» տիպին, որի մասին խոսում է Ստ. Լիսիցյանը և որը իրենից ներկայացնում է Լոռուն բնորոշ ուղղանկյուն գերանաշարքերով տիպի և հազարաշենի խառնուրդ[8]։

Գեղարվեստական արտահայտչամիջոցները զուսպ էին և հիմնականում կիրառվում էին տների ներսում։ Սյունների սեղանաձև խոյակները՝ զարդարված փորագրված նախշերով, գերաններին հարած երիզները, խիստ ֆունկցիոնալ և դեղեցիկ գմբեթավոր ծածկը գյուղական ինտերյերին բավականին գրավիչ տեսք էին հաղորդում։ Դրան գումարվում էր նաև գորգերի, կարպետների ու խսիրների գունագեղությունը և որմնախորշերում կամ փայտե դարակների վրա շարած ամանեղենը։

Գլխատունը կառուցելիս, այն կիսով չափ (վաղ շրջանում՝ լրիվ) խորացնելով գետնի մեջ, գյուղացին ջերմամեկուսման խնդիրը լուծում էր մինիմալ չափով, իրեն մատչելի միջոցներով։ Գմբեթավոր փայտյա ծածկը կոչված էր վերգետնյա օդային տարածություն գրավելու, ուռուցիկության շնորհիվ արևի ջերմությունը կլանող մակերես ու ջրահեռացումը ապահովելու, ինչպես նաև թոնրի ծուխը վեր քաշելու համար։ Հնում, հավանաբար, այստեղ էլ, Սյունիքի և Արցախի նման, մեծահարուստները կառուցում էին վերգետնյա քարե գլխատներ և գերանակառույց գմբեթը փոխարինում քարե գմբեթով[9]։ Պետք է ենթադրել, որ միջոցների սղության պատճառով գյուղացիները չէին կարող համատարած վերգետնյա քարե բնակարաններ կառուցել։ Կապիտալիզմի զարգացումը բերեց իր հետ այդ միջոցները։ Բնակավայրերի կառուցապատմանմեջ գերիշխող ծավալներով աչքի էին ընկնում նաև եկեղեցական կառույցները, երբեմն ծածկված քարերով, ավելի ուշ՝ կղմինդրով։

Հայաստանի համեմատաբար տաք շրջաններում, այդ թվում և ուսումնասիրվող վայրերում, գլխատներին զուգահեռ զարգացել են հարթ, սեղանաձև կամ երկկողմանի աստիճանաձև կտրվածքով գերանակապ ծածկեր ունեցող ուղղանկյուն կացարանները։ Այստեղ դրանք հանդես են եկել գլխատներից քաղաքատիպ տներին անցնելու շրջանում՝ XIX դ. երկրորդ կեսից, ունեցել են որմնախորշեր, տաքացվել բուխարիկով, լուսավորվել երկայնակի մի ճակատի լուսամուտներով և այդ մասում էլ պաշտպանվել սյունավոր երեսբացով։ Մեծ կացարանները ներսից ունեցել են 1—4 սյուներ։ Ավելի շատ տարածված է եղել երկայնակի երկու մայր գերանների մի ընդլայնական խոյակով և սյունով պահվող տեսակը։ Նման տիպի կացարանների զարգացած տարբերակը նույն մանրամասերն ունեցող թաղակապ բնակարանն է, որն առկա է եղել հարևան Արցախում և Սյունիքում։ Այդ տներին կից նույնպես կարող էին լինել օժանդակ բաժանմունքներ ու շինություններ, բայց այդպիսիք մեզ չեն հասել։ Հիշյալ տիպի կացարանների թաղակապ նախամուտքերի շարքերով են կազմվել վանական խուցերը[10]։ Այսպիսի բնակարանները մենք դասել ենք երկրորդ «անցումային» տիպին։ Դրանք պայմանականորեն կարելի է անվանել նաև օրորոցաձև ծածկով տներ (նկ. 1)։

Կապիտալիզմի զարգացման հետ փոփոխություններ է կրում գյուղացու կենցաղը, կերպարանափոխվում է նրա բնակարանը։ XIX դ. վերջերից Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում սկսեցին հանդես գալ նոր տիպի՝ վեր-

---

7 Տե՛ս В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, с. 67, Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959, էջ 78։

8 Ст. Лисициан, Из материалов по изучению жилищ Армении, «Нор-Баязетский азгарашенк...», с. 140.

9 Ն. Ծ. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 69։

10 Տե՛ս Ն. Ծ. Պապուխյան, Ցայրվող ծածկերով բնակարանների տեղն ու դերը Հայաստանի հին ու միջնադարյան ճարտարապետության մեջ («Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումի զեկուցումների ժողովածու», հ. 2, Երևան, 1981, էջ 333)։



Նկ. 1. Բնակելի տուն Նոյեմբերյան ավանում (անցումային տիպ)։



Նկ. 2. Բնակելի տուն Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղում (նոր տիպ՝ մի հարկանի)։

գետնյա մեկ, մեկուկես և երկու հարկանի ուղղանկյուն հատակագիծ ունեցող, հարթ առաստաղով, փայտյա հատակներով, լուսամուտներով, երկթեք կղմինդրածածկ տանիքով և մուտքի առջև սյունավոր երեսբացով բնակելի տներ (նկ. 2)։ Այս տիպի տան առաջ գալը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով։ Արտադրատնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով հնարավոր դարձավ վարձու փոխադրամիջոցներով լեռներից տեղա-

փոխել բավարար քանակությամբ քար, որը տեղում մշակում էին վարձու քարտաշները և շարում ընտանիքի անդամների հետ միասին։ Ավելի ուշ, երբ զարգացավ քարի արդյունահանման և մշակման արտադրությունը, ունևոր գյուղացիները կարող էին գնել պատրաստի քար, լուսամուտների համար՝ գործարանում արտադրվող ապակի. խոշոր գյուղերում գործում էին աղյուսի և կղմինդրի փոքրածավալ գործարաններ։

XIX դ. վերջերից սկսած կառուցված բնակարանները զրկվեցին գլխատանը բնորոշ մի շարք հատկանիշներից։ Լինելով վերգետնյա, դրանք անպայմանորեն ունեին նկուղ կամ կիսանկուղ. գյուղացին չէր կարող հրաժարվել այդ հարմարավետ մթերապահեստներից, ուր նույնիսկ ամենաշոգ օրերին զով էր լինում։ Որոշ դեպքերում կիսանկուղային հարկը օգտագործվում էր նաև որպես գոմ, չնայած ավելի հաճախ գոմը մնում էր առանձին կառուցված, տանից քիչ հեռու, բակի մեջ։ Քանի որ տունը ուներ նկուղ, հետևաբար վերևի՝ բնակելի հարկը չէր կարող ունենալ թոնիր, և բնակարանը տաքացվում էր բուխարիկով։ Թոնիրը տեղադրում էին պատշգամբում կամ տան մոտ՝ մի առանձին, թեթև ծածկի տակ։ XX դ. սկզբներից լայնորեն տարածվեցին փռերը՝ առանձին կառուցված քարե վառարաններ, որոնց մեջ հաց էին թխում։ Հետագայում կառուցվում էին ընդհանուր փռեր, որոնցից օգտվում էին մի քանի տուն միասին։ Այսպիսով, զրկվելով թոնրից, բնակարանը կարիք չուներ ծուխը հեռացնող երդիկի։ Լույսի հարցը նույնպես նորովի էր լուծվում՝ վերգետնյա պատերի մեջ արվում էր բացվածքներ։ Եվ, այսպես, հետզհետե դադարեցին կառուցել բարդ գերանակապ գմբեթավոր ծածկեր։ Սրանց եկավ փոխարինելու հարթ առաստաղը։ Այս ժամանակաընթացքում կառուցվում էին նաև էկլեկտիկ տիպի բրնակարաններ՝ գմբեթավոր կամ օրորոցաձև ծածկով, երդիկով, թոնրով և պատուհաններով։ Սա անցումային տիպն է, որի մասին խոսվեց վերևում։ Հարթ առաստաղը ծածկվեց երկթեք տանիքով։ Դա բնական էր այս շրջանների անձրևաշատ կլիմայի պայմաններում[11]։

Նույն ձևով էին կառուցում իրենց բնակարանները նաև հարևան գյուղերում ապրող ռուս աղանդավորները, որոնք վերաբնակվեցին այստեղ 1840 և 1846 թվականներին[12]։ Ուշագրավ էր ռուսական գյուղերի հատակագծումը. մեկ հիմնական ուղիղ փողոցը հատվում էր մի քանի ուղղահայաց ենթակա փողոցներով։ Փողոցների երկու կողմերում կանգնած էին մեկ-երկու հարկանի գերանակառույց, սպիտակեցված տներ։ Բարձր երկթեք տանիքները ծածկում էին ծղոտով, տախտակներով, ապա նաև՝ կղմինդրով, պատուհանները փոքր էին։ Բնակարանի և օժանդակ սենյակների համակառույցը սովորաբար ձգվում էր մի ուղիղ գծով՝ փողոցին ուղղահայաց։ Տանը, որի պատուհանները և պատշգամբը նայում են փողոց, բակի կողմից կցվում էր ախոռը, սրան՝ հարդանոցը, բաղնիքը և այլն։ Բնակարանի առջև պարտադիր էր փոքր ծաղկանոցը։ Տան գլխավոր ճակատը զարդարում էին փայտյա ճոխ զարդաքանդակներով և ներկում զանազան գույներով, այնպես որ փողոցը դառնում էր ծաղիկների, նախշերի և սրածայր տանիքների մի գունագեղ շարք։ Դեռևս այդպիսի տեսք ունի Կալինինոյի, նախկին Վորոնցովկայի՝ մոլոկանների ամենանշանավոր գյուղի գլխավոր փողոցը։

Ռուսական և եվրոպական ճարտարապետության ազդեցությունը զգալի էր հատկապես Դիլիջանում։ Այստեղ աչքի է ընկնում բնակարանների ուրվապատկերի ձգվածությունը դեպի վեր՝ բարձր տանիքների շնորհիվ։ Երկթեք տանիքները ծածկված են կղմինդրով[13]։ Նոր տիպի բնակարանները կառու-

---

11 Ա. Բաղդասարյան, Ա. Ճուղուրյան, Կ. Օհանջանյան, Հայկական ՍՍՌ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1951, էջ 30։

12 Ե. Լալայան, Բորչալուի գավառ («Աղգագրական հանդես», գ. 9, Թիֆլիս, 1902, էջ 202)։

13 Պետք է նշել, որ այդ շրջանների մոնումենտալ ճարտարապետության մեջ բազմաթիվ հուշարձաններ դեռ V դարում ծածկված են եղել երկլանջ կղմինդրյա ծածկով, որը ավելի ուշ շրջանում (IX—X դդ.) փոխարինվեց քարե սալերով (տե՛ս Ս. Ե. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 115)։

ցում էին մեկ, մեկուկես կամ երկհարկանի սենյակների միաշար դասավորվածությամբ։ Որպես կանոն առաջին հարկի հատակագծումը կրկնվում է երկրորդ հարկում։ Սովորաբար իրար էին կցում 1—2, իսկ ունևորները՝ մինչև 10 սենյակ։ Երկրորդ հարկ բարձրանում են մեծ մասամբ արտաքին աստիճաններով, որոնք կառուցվում էին տան հատակագծային եզրագծին կից՝ դրսից, բայց երբեմն նաև՝ առնված երեսբացի մակերեսի մեջ։ Սանդուղքները կառուցում էին փայտից, հետագայում փոխարինելով քարով և բետոնով։ Այս նոր տիպի բնակարանի մուտքի առջև ավանդաբար կառուցվում էր սյունավոր երեսբաց, որը նախկինի պես ուներ կարևոր նշանակություն ընտանիքի կենցաղի կազմակերպման գործում և տաք ամիսներին օգտագործվում էր ամբողջ օրվա ընթացքում։ Երեսբացը կառուցում էին մեկ, երկու կամ երեք կողմերից (նկ. 2)։ Այն ուղղվում էր դեպի հարավ, արևելք կամ հարավ-արևելք։ Հյուսիսային ճակատը մեծ մասամբ թողնում էին խուլ։ Բնակարանի դեղարվեստական մշակումը նույնպես կենտրոնացված էր երեսբացի մանրամասների վրա՝ ճաղերը, սյուները պսակող փայտյա մասերը լինում էին քանդակազարդ։ Նոյեմբերյանի շրջանում պատերը կառուցում էին կիսամշակ սպիտակ կրաքարից, իսկ հոսում լայնորեն կիրառվում էր բազալտը, նաև՝ աղյուսը, երբեմն էլ՝ երկուսը միասին։ Օրինակ, պատերը կառուցում են բազալտից, իսկ առաջին հարկի սյունաշարը՝ աղյուսից (նկ. 3), կամ քարե պատի մեջ բաց-



Նկ. 3. Բնակելի տուն Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում (նոր տիպ՝ երկհարկանի)։

վածքը եզրագծվում է աղյուսով, երբեմն էլ ուղղակի հաջորդում են քարի և աղյուսի շարքերը (այդպիսի մի տուն շափագրել ենք Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղում)։ Շենքի անկյունները շարում են լավ մշակված քարերով։

Սովետական շրջանում նյութական պայմանների բարելավումը հետզհետե առաջ է բերում բնակարանի վերափոխման նորանոր պահանջներ։ Համատարած կառուցվում են երկհարկանի բնակարաններ։ Թուխարին կորցնում է իր սկզբնական նշանակությունը և օգտագործվում որպես խորշ։ Սենյակը տաքացնելու համար մեծ մասամբ օգտագործում են թիթեղյա սովորական կամ պատի վառարան և թրծած աղյուսից կամ քարից պատրաստած սալջախ։ Այժմ փուռը օգտագործվում է միայն հաց թխելու համար, իսկ կերակուրը

պատրաստում են տան մեջ՝ փոքրածավալ վառարանների և էլեկտրական կամ բնական գազի սալօջախների վրա, որոնց համար հատկացվում է հատուկ մակերես՝ խոհանոց։ Այդ նպատակով սովորաբար ապակեպատում են երեսբացի մի մասը, ավելի հաղվադեպ՝ սենյակների միջև կառուցում փոքր միջանցք-խոհանոց։

Ժողովրդական բնակելի տների վերջին տիպը դա երկհարկանի, սենյակների երկշար դասավորությամբ և քառալանջ տանիքով տունն է (նկ. 4)։ Սեն-



Նկ. 4. Բնակելի տուն Նոյեմբերյանի շրջանի Բաղանիս գյուղում (նորագույն տիպ)։

յակների երկշար դասավորությունը բխում է բնակարանների հատակագծային զարգացման նախորդ փուլից։ Պատշգամբի մակերեսից առնված խոհանոցները, ննջարանները այժմ կառուցվում են հիմնականում խորքում գտնվող սենյակի առջև, և սենյակների ողջ խումբը գոտկվում է երեք, նույնիսկ չորս կողմից անփոփոխ, դարձյալ բաց պատշգամբով, որից ուսումնասիրվող շրջանների բնակիչները չեն հրաժարվում։ Այս տիպի բնակելի տան զույգ հարկերն էլ տաքացվում են ջեռուցման ժամանակակից միջոցներով, սակայն գյուղում միասնական կոյուղու բացակայության պատճառով արտաքնոցը դեռ չի գտնվում շենքի ներսում։ Կառուցելով նման բնակարան, գյուղացին պահպանում է ժողովրդական բնակարանաշինության ավանդույթները։ Դրանցից առաջինը, ինչպես ասվեց, լայն և երկար պատշգամբներն են (միջին լայնքը՝ 1,5—2,5 մ), ինչպես նախկինում գլխատան սրահը, հետագայում՝ նոր տիպի տան սյունաշար երեսբացը և ավելի ուշ՝ ապակեպատ պատշգամբը։ Հաճախ բուն շենքը, զբաղեցնելով փոքր մակերես, թվում է պատկառելի չափեր ունեցող՝ շնորհիվ պատշգամբի։ Մեկ ուրիշ ավանդույթ. աստիճանները նախկինի պես կառուցվում են դրսից, այսպիսով, առաջին և երկրորդ հարկերը գործում են որպես ինքնուրույն, անջատ տարածություններ։

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ժողովրդական ճարտարապետության բնակելի կառույցների շինանյութերը ձեռք են բերվել բնակավայրերի մոտակայքից։ Դրանք հիմնաքանում կրաքարը և բազալտն են։ Վերջին ժամանակներում օգտագործում են նաև բերովի տուֆ։ Նշված շրջանները հարուստ են անտառներով, ուստի օգտագործվել է նաև փայտը, հիմնականում ծածկերի և պատշգամբների կառուցման համար։ Տեղում զարգացած է եղել

թրծած աղյուսի և կղմինդրի արտադրությունը։ Բնակարանների կառուցման համար օգտագործվել է բեկորաձև կոտրաած կրաքարը, որձաքարը, ավելի քիչ՝ տուֆը. դրանց արտաքին մակերեսները հազվադեպ են մշակվել։ Կիսամշակ կամ սրբատաշ քար է օգտագործվել միայն շենքի անկյուններում, ինչպես նաև բացվածքների պարագծով։ Դա հանդիսացել է նաև որպես արտահայտչամիջոց։ Քարն ու աղյուսը հաճախ համատեղված են մի կառույցում. օրինակ՝ շենքը կառուցված է քարից, բայց առաջին հարկի պատշգամբի կամարաշարը աղյուսից է (նկ. 3), կամ՝ քարե պատի բացվածքները երիզված են աղյուսով, երբեմն էլ ուղղակի աղյուսե դեկորատիվ գոտի են ունենում։ Բազալտե կառուցվածքներ հիմնականում հանդիպում են Թումանյանի, Գուգարքի, Ստեփանավանի շրջաններում։ Բազալտը սովորաբար մշակվում է հետևյալ կերպ. քարի ճակատը երիզվում է հարթ տաշված 2 սմ լայնությամբ ժապավենով, իսկ միջին տարածությունը թողնվում է կոպտատաշ։ Վերջին՝ նորագույն տիպի տները հաճախ կառուցվում են սրբատաշ տուֆից, կրաքարից, պատշգամբներում լայնորեն օգտագործվում են մետաղական տարրեր (խողովակներ, անկյունակներ և այլն)։

Այսպիսով, Սովետական Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ժողովրդական բնակելի տները հիմնականում չորս տիպի են՝ 1. հին տիպ (գլուխատուն), 2. անցումային տիպ (օրորոցաձև ծածկով տուն), 3. նոր տիպ (վերգետնյա, լուսամուտներով, երկթեք տանիքով տուն) և 4. նորագույն տիպ (երկհարկանի, սենյակների երկշար դասավորությամբ, քառաթեք տանիքով տուն)։ Տիպերը ժամանակագրականորեն դասակարգելիս երևում է դրանց ավանդույթաբար միմյանց կապված լինելը, որն արտահայտվում է որոշ հատակագծային և ծավալատարածական գործադրաձևերի (բաղադրամասերի) կայուն կրկնման մեջ, ինչպես, օրինակ՝ պատշգամբի պարտադիր առկայությունը, հյուսիսային խուլ պատը, բացվածքների կողմնորոշումը դեպի հարավ-արևելք. նկատվում է, թե ինչպես ժողովրդական ճարտարապետությունը ճկունորեն արձագանքում է ընտանիքի դեմոգրաֆիկ փոփոխություններին և կենցաղային մշակույթի դարգացմանը։ Չնայած տարբեր մշակույթների ազդեցությանը, բնակարանների ուսումնասիրվող տեսակները ինքնատիպ են նաև իրենց գեղարվեստական լուծմամբ։

ТИПЫ НАРОДНОГО ЖИЛИЩА СЕВЕРО-ВОСТОЧНЫХ РАЙОНОВ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

ЛИЛИТ ПИПОЯН

Резюме

Северо-восточные районы Советской Армении, благодаря своим историко-географическим условиям, сравнительно рано претерпели изменения, связанные с развитием капитализма, в частности, изменилась народная жилая архитектура. Нами выделено четыре типа жилищ. Глхатун, занимающий в нашей классификации первый («старый») тип, уступил место промежуточному типу—дому с полуцилиндрическим земляным покрытием, и, далее, «новому» типу, т. е. каменному дому с окнами и двускатчерепичной крышей. Возникновение последнего обусловлено рядом обстоятельств, связанных как с местными традициями, так и влиянием русской и европейской архитектуры жилого дома. Последний, «новейший» тип—это квадратный двухэтажный дом с двухрядным расположением комнат, построенный из тёсаного камня.

Во всех типах народного жилища прослеживается тенденция широкого использования полуоткрытых и открытых балконов, что объясняется мягким климатом исследуемых районов. Два последних типа («новый» и «новейший») имеют самобытные решения архитектурно-художественных задач в экстерьере, тогда как старые типы жилищ отличались замкнутостью и интерьерностью решения художественных задач.